

ԻՐԱՆԻՆԻ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Բաժնետիրի համար Տարեկան 12 ֆր.
» » Վեցամսեայ 6 ֆր.
Արտատպանի համար (երկու փուլ մեկ ծրարով) Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր.
Ամերիկայի » 2.60 տղ վեցամս 1.50
ԿԱՆԽԻՒՆ ՎՃԱՐՆԵԼԻ

Համակ դրամ եռայլն դրկել հետեւեալ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՆԻՆԻ» ՀՐԱԳՐՈՅ. — ՎՍՌՆԱ (Պուլկարիա)
Редакция на ВѢСТНИКЪ
„И р а в у н к ъ“
ВАРНА (България)

Rédaction du journal
„I r a v o u n k“
V A R N A (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք
ես չեն դրկուիր եւ յարմար դասուած-
ները միայն կը հրատարակուին աւ-
րոյշովին կամ մասամբ:
Խմբագրութեան տղը 20 սանթիմ. երե-
փեւ աւելի անգամներու համար 20 0/0
գեղջ կը շինի:

ՊԻՐԱՆԻՆԻ ԵՒ ԾԱՆԱԼԸ

Խմբագրութիւնս քաջաշնորհաբար
ծողովուրդի ցոյց տուած համակ-
րանքէն կուգայ յայտարարել թէ
մտադիր է «Իրանին»-ի ներկայ
ծաւալը մէկու կէս պատիկ աւելի
մեծցնել, նոյնը պահելով բաժա-
նորդագրութեան պայմանները:
Այդ միջոցաւ պիտի կրնանք թեր-
թին պարունակութեանը ալ աւե-
լի պէսպէսութիւն տալ եւ «Իրա-
նին»-ը հետաքրքրական ընծայել
մեր արգոյ ընթերցողաց:

ԼՍԱՐԱՆԸ

Ասկէ շուրջ երեք տարի առաջ
այս սիւնակներու մէջ յօդուածնե-
րու շարք մը երեւաց լսարաննե-
րու բազմակողմանի օգուտները
թուող: Բարեբաղդութիւն է ը-
սել թէ այդ յօդուածներ առանց
արձագանքի չի մնացին այն ատեն,
քիչ օրուան միջոցին վառնայի
մէջ երիտասարդներու խումբ մը
կազմուեցաւ գոյութիւն տալու ը-
սարանի մը, որ դժբաղդաբար
կարճ կեանք մը ունեցաւ, յետոյ
նոյնը եղաւ Ռուսլոքի եւ Շուս-
լայի մէջ, թերեւս ուրիշ տեղեր
ալ:

Հոս մեր նպատակը չէ լսարա-
նին բազմակողմանի օգուտները
թուել, որ կրկնութիւն մը եղած
պիտ' ըլլար: Եւ քիչ մը կուգինք
բացատրել, թէ ինչո՞ւ համար այդ
ձեռնարկութիւնները չի շարունակ
ուեցան: Այս «ինչո՞ւ»ին հակիրճ
կերպով պատասխանած ըլլալու
համար հետեւեալ պատճառները
ցոյց տալ կը բաւէ:

Ա. Լսարանի մը օգտակարու-
թիւնը կատարելապէս ըմբռնողնե-
րը քիչեր եղան:

Բ. Մեր դաստիարակեալ դա-
սակարգին մեծագոյն մասը ձեռն-
պահ մնաց:

Գ. Լսարաններուն շուրջը կու-
տակցական խնդիրներ դարձան:

Այս երեք պատճառներուն ծը-
նունք տուող գլխաւոր թերին այն
էր որ նախաձեռնութիւն ընողնե-
րը գործը հաստատ հիման վրայ

դնելու համար չի կրցին իրենց
շուրջը հաւաքել այն կարգի անձ-
նաւորութիւններ որոնց ներկայու-
թիւնը գործին պատկառանք մը
ընծայէր եւ անոր յարատեւու-
թիւնը ըստ կարի ապահովէր:

Մեր մէջ թէ՛ մտաւոր եւ թէ՛
նիւթական առաւելութիւններով
փայլող տարիւոր եւ երիտասարդ
դասակարգը, աննշան բացառու-
թեամբ, իրենց սովորական եղած
ինչպէս պէտք էի յաւիտենական
յանկերգը շրթունքին, անփոյթ
ու տառամոտ նախընտրեցին ի-
րենց ահագին պարագայ ժամերը
սրճարաններու մէջ նարտի, եւ
թուղթի յատկացնել, քան թէ
շարժութեան մէջ քանի մը ժամ
դոհլով հանրային բարոյական
բարձրացնելու միջոցներուն վրայ
խորհիլ:

Այդ դասակարգը՝ որ ամենէ
աւելի մեր յիշափոխականայ թե-
րի կողմերը քննադատելէ ախոր-
ժողն է, գոնէ պահ մը չ'սթափե-
ցաւ թրքական հալածանքներէ
չլմորած, կուտակցականներու «քա-
չէ քաչեմ» նորէն շուարած ամփո-
խին սայթաքումներուն բարոյա-
պէս նեցուկ մը կանգնելու:

Տպածոյի վաճառականը կամ
ասոր թոշակաւոր գործակատարը
վաճառատան մէկ անկիւնը ապ-
րանքին դէզերուն առջեւը նստած,
մօտ ապագային ոսկիներու մեծ-
կակ գումար մը շահելու խոկում-
ներուն անձնատուր, իր շուրջէն
անցող դարձողներուն արհամար-
հոտ նայուածք մը հազիւ ուղղել
կը բարեհաճի, եւ եթէ Որբախը-
նամի կամ Աղքատախնամի մը
քանի մը ֆրանք տայ, մեծ բա-
րեբարութիւն մը ըրած ըլլալու
հաւակնտութեամբ, այլ եւս ի-
րաւունք ունեցած ըլլալ կը կար-
ծէ իր շրջանակէն դուրս գտնուող-
ներուն դէմ վճիռներ տալ: Անոր
համար վարժապետները պոչ մար-
դեր են, խմբագիրները հաւաքա-
ներ, վարդապետները քիչաֆ-
ձիներ են, քահանաները ծակ
աչքներ, յիշափոխականներն ալ
գրեթէ առանց բացառութեան
«առաւ փախաւ»ներ:

Նոյն մտածումը, նոյն վարմուն-
քը եւ միեւնոյն վճիռները իրենց

իրացուցած են ցորենի վաճառա-
կանը, սեղանաւորը եւ ուրիշ բա-
րեկեցիկ դասակարգերու մէկ ա-
հագին մեծամասնութիւնը: Ասոնք
25-30 տարի առաջ ինչ որ էին
նոյնն են եւ այսօր: Կարծես ի-
րենց վրայ բնու ազդեցութիւն
չեն ըրած այն գահավիժումները,
որոնց ազդովին թէ՛ հարուստը եւ
թէ՛ աղքատը, թէ՛ գիտունը եւ
թէ՛ սոգէտը ենթակայ եղանք:

Արդեօք ալ ժամանակը չէ՞ բա-
թափելու: Եւ ի՞նչու եւ սնամէջ
քննադատութիւններէն ո եւ է օ-
գուտ կրնա՞յ սպասուիլ, եթէ չի-
նիչ ու գործնական ձեռնարկու-
թեանց չի դիմուի: Արդեօք իրա-
ւունք չունինք մեր նիւթական եւ
մտաւոր կարողութիւններով փայ-
լող դասակարգէն ալ նախաձեռ-
նութիւններ սպասելու:

Բարեբախտաբար մէկ երկու
շրջանակներու մէջ կը լսենք, թէ
Լսարան մը հաստատելու օգտա-
կարութեան վրայ խօսքեր կը
դառնան: Մեզ փափագելի է որ
այդ խօսքերը միայն ժամանցի հա-
մար զուրցուած չըլլան: Ինչպէս
ըսինք այս տողերով Լսարանի մը
բազմակողմանի օգուտները թուել
չէ նպատակնիս, ատիկայ ուրիշ
յօդուածի մը նիւթ կընենք եթէ
հարկ տեսնուի, այլ կը բաղձանք
այդ շրջանակներու մէջ խօսակցու-
թեան առարկայ եղող Լսարան մը
հաստատելու խնդիրը լուրջ խոր-
հրդակցութեանց առարկայ ընել
եւ գործնականին մէջ մտնել ա-
ռանց ձեռնպահութեան:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Բոյժը 30 յուլիս

Պուրէշ, ամսոյս 22ին, շաբաթ
օր, երեկոյեան ժամը 11ին հան-
րածանօթ բրօֆէսօր Է «Փէնինսու-
լա Պալքանի» հանդէսին տնօրէն
խմբագիր Սթէֆան Միհայիլեանու
Մակեդոնացի Ռումէն, գետին ին
կալէ կրելով վնասարուածներ
կու հաշուած Պուլկար Տիմիթր-
ֆէն, անդամ Մակեդոնական ըն-
կերութեան: Այս 18 տարեկան
երիտասարդ ոճրագործը ձերբակալ-

ուելով, հարցաքննութեան մէջ
յայտնած է որ սպաննած է հրա-
մանաւ Սօֆիայի Մակեդոնական
ընկերութեան:

Ռումէն մամուլը իրար անցած
է. «Այն ընդ ազան տառաժնւ
ատաժան» կը պոռայ: Եղան թեր-
թեր ալ ըսող թէ Պուլկարները մե
զի հունգարացիներէն եւ հրէանե-
րէն աւելի թշնամի են, փոխանակ
մեզի երախտապարտ ըլլալու որ
իրենց համար արիւն թափեցինք
որ թուրքին ետեւողանէն ազատե-
ցան, հիմա ելած Տօպրուճայի ու
Մակեդոնիայի վրայ աչք տնկած
են ու մեզ կըսպաննեն: Կըսեն թէ
այս մեծ զոհը մեզ պիտի արթըն-
ցնէ եւ մեզ պիտի մղէ այսուհետեւ
մեր դրացի Պուլկարին վրայ լաւ
ուշադրութիւն դարձնելու: Մէկ
խօսքով թէ կառավարութիւնը,
թէ մամուլը եւ թէ ժողովուրդը
շատ կծու լեզուով զինուած են
Պուլկարներուն դէմ: Շատ պուլ-
կարներ կը ձերբակալուին: Անցա-
գիր չունեցող ու ամեն պարագ
չըջողները, ամենն ալ երկրէն գուրս
պիտի հանուին: Նոյն իսկ մեր
բաղաժի մէջ ալ քանի մը պուլկար
ներ ձերբակալեցին իբրեւ կոմիտէի
անդամներ: Բոլոր պուլկարները
ոստիկանատուն կը տարուին հար-
ցուփորձ կընեն, լուսանկարը կը
բաշին եւ անցագիրը առնելով թող
կուտան:

Ռումէն կառավարութիւնը նօ-
թա մը ուղարկած է Սօֆիայի կա-
ռավարութեան եւ գոհացում կը
պահանջէ, ու միեւնոյն ատեն ջըն-
ջուժը Մակեդոնական ընկերու-
թեան: Ընկերութեան դէմ ալ դատ
բանալու մտադիր է:

Չարչարուողները աղքատներն
են, հարուստին ֆրաս չկայ: Գործ
բացուեցաւ ոստիկանութեան պաշ-
տօնեաններուն «կաթ» ծծելու:

Շարժում մէջ նոր օրէնք մը
խմբագրեցին միւնիստրները իրենց
վերջին նստին մէջ: Այսուհետեւ
Ռումանիա եկող ամեն օտարական
ոտքը Ռումանիոյ հողը դիւմին
պէս, որ քաղաք որ երթայ, 24
ժամուան մէջ պէտք է ներկայանայ
ոստիկանատունը եւ արձանագրել
տայ անունը, մականունը, ինչ
գործով զաւր եւ ո՞վ ըլլալը:

Մակեդոնական ընկերութեան Պուրբէշի մասնաճիւղի քանի մը գլխաւոր անդամները, ինչպէս կարգադրինք թերթերուն մէջ, արտաքսուած են:

Թերթերը ինչպէս կը գրեն քանի մը մեծ պաշտօնեաները անստորագիր նամակ ընդունած են սպառնալից պարունակութեամբ թէ՛ «կարգը ձերն է»:

Հիմակու հիմա գործերու ընթացքը այսպէս է: Լա Ռուսի ֆրանս. թերթը հանգանակութիւն բացած է Միհայիլեանի արձանը կանգնեցնելու համար:

Ռուսոս քցի Տիար Մելքիսեդէկ Սեթեան՝ որ ամիսէ մը ի վեր քաղաքի գործով քաղաքս կը գրտնուի, առջի օրը տեղւոյս ոստիկանութիւնէն, Պուրբէշէ հեռագրաւ ստացած հրամանի մը համեմատ, ձերբակալուեցաւ. բայց երէկ թող տրուեցաւ:

ԶԻՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Գիրմանիոյ նախորդ պատերազմական նախարար Կոմս Վալտեր. զէ Չինի միջազգային զօրքերուն ընդհ. հրամանատար անուանուեր է:

Ինչպէս կերելի դաշնակից պետութիւնք լուրջ շարժում մը ընել կելին, ալ վերջ մը դնելու համար Չինի ներկայ տագնապից եւ վտանգալից կացութեան:

Մեծամեծ զոհողութիւններով քիչ մը ուշ, քիչ մը կանուխ, Դաշնակիցներու Բէքին մտնելը պիտի իմանանք: Բէքինի մէջ պիտի սկսի Չինական բուն խընդիրը, երբ կարգը գայ այն գործառնութեանց, որոնք տեղի պիտի ունենան ապագային այս տեսակ

տեսարաններու կրկնուրը արգիլելու համար Ծայրագոյն Արեւելքի մէջ:

Ութ տէրութիւններ թէեւ պիտի մտնեն Բէքին, հաւասար զոհողութիւններով այդ երկրին մէջ ապագային հաւասարապէս ձայն ունենալու իրաւունքը վաստկած, սակայն մէկգլխու ներհակ դիտումներով և շահերով:

Ճիշդ հոս է որ Չինական հարցը սուսաճելու իր ամեն մասնաւորութիւններով ու ծանրութիւններով բնական կուգայ, հարց մը որուն կենսոտույթիւնը քաղական ալ չեւտուած է Ռուսո-Չին պատերազմի ծնունդ տունելէն:

Ռուսո Չին պատերազմը Գազագ ներու Մանչուրիոյ մէջ թէեւ քիչ մը ծանր բայց ապահով յաղաթանգութեամբ չէ՛ր արգեօք որ մը չից միւս դաշնակից պետութիւնները քիչ մը շաճիլ կանխելու համար Ռուսերը Բէքինի մէջ. ուրուն պարիսպներուն առաջը ուսը իբր պատերազմիկ պիտի երեւայ: Պարագայ մը որ Չինական խնդրոյն կենսոտույթիւններէն մին ցոյց կուտայ:

Լոնտոնի դահլիճը երէկ հրապարակաւ կը յայտարարէր թէ Չինը Չինացիներով պէտք է կառավարուի. երբ ասդին ուսական մասովը գրաքննիչներու հսկողութեան ներքեւ ըլլալով հանդերձ կը պաշար թէ Չինը Ռուսիոյ դէմ պատերազմ հրատարակած է, պէտք է Չարին կառավարութիւնը ամենէն անկախ եւ անկաշկանդ գործէ:

Ահա հարցին ուրիշ մէկ կնճռ. տութիւնն ալ:

Այս խնդրոյն վերջաբանը դրուելու միջոցին, երբ ուզուի Չինի «ամբողջութիւնը» պահել, նոյն իսկ միջազգային թեւարկութեան մը ներքեւ, Ռուսիոյ միծնալուն դէմ, այս ծրագիրը ինչ ընդունեն:

Լուծիւն պիտի գտնէ Ռուսաց կողմէ, որք Մանչուրիոյ մէջ կանոնաւոր պատերազմ մղելով եւ արաւուն թափելով կը յառաջանայ:

Երբ նկատի ունենանք այս լուրջ կետերը եւ երբ միւս կողմէն պետութեանց դիտումներն ու հանդէպ իրարու յայտնի տրամադրութիւններն հետազօտենք, չենք կրնար տակաւին ընդհանուր հրամանատարի մը անուանումը համաձայնութեան մը բարեբար նշանը համարել Չինական խնդրոյն զոհացուցիչ ելք մը տալու համար:

Ս.

ԼՐԱՔԱՂ

Վեհափառ Հայրապետը վերջիս ամուսնալուծման 9 վճիռներ տուած է, որոնք հրատարակուած են Էլմի ածնայ կրօնական ամսաթերթին վերջին թւոյն մէջ:

— Սանասարեան վարժարանը այս տարի 12 շրջանաւարտներ ունեցած է, որոնցմէ ինը ուսումնական բաժինէն, իսկ երեքը՝ արհեստագիտականէն են:

— Հանգուցեալ բարերար Պ. Զան չեանցի կարգադրութեամբ խիզաւայ մէջ բացուելիք որբանոցին համար հարկ եղած կառավարական հրամանը առնուած ըլլողով, մնացած են միայն տեղային կարգադրութիւններ. որոնք ալ մօտ օրէն կ'աւարտին:

— Ումպերթօ Թագաւորին հոգոյն համար Պոլսոյ Բէրայի Սան. դամարիա եկեղեցին կատարուելիք հոգեհանգստեան, մեր Պատ. Իրաքարանի կողմէ ներկայ գրտնուած են Երէցեան Տ. Գէորգ եւ Ճէ վահրճեան Տ. Գաբրիէլ Եպիսկոպոսները իրենց հետ առնելով Պատ.

Իրաքարանի Ա. գործակաւար Տիար Տիգրան Ներսէսեան և քաղ. Գրիգոր Խըրտեան:

— Շիքաօյի ազգային քերականութիւնը որքեքրած են. մին վարադի մանչերու որբանոցին մէջ, իսկ միւսը Սալնապատի աղջկանց որբանոցը:

— Երուսաղէմի Ս. Յակոբեանց Հայոց վանքին մէջ հին Աւետարան մը կայ եղեր, մեծագիր ձեռագիր, Մեսոպոտամի տառերով մագաղաթ վրայ գրուած: Այս պատկաւելի հընուութիւնը Ս. Թուականը կը կրէ:

— Վանայացի Տ. Ներսէս Եպիսկոպոս, Պոլիս երթալու համար վանէն ճանբայ ելած է:

— Սուլթանին տրուելիք ուղեբնդ պատրաստուեր է:

— Պ. Կարապետ Գալֆայիսյան այն որբերգու դերասանը, որուն վրայ շատ անգամներ այլ ընդ ալլո բաներ գրուեցան թէ տեղային և թէ բարեկեան հայ մամուլին մէջ, այս անգամ Պոլիս գացեր է, ուր հիմէ կարելի ըլլայ քանի մը ներկայացումներ տալէ յետոյ Պուլկարիա պիտի գայ եղեր, ասկից ալ Ռուսիա երթալու համար:

— Բաղէշի առաջնորդ Տ. Եղիշէ վ. Չիլիկերեանի Պատրիարքարան խրկած մէկ տեղեկագրէն կիմացուի որ Բաղէշի գիւղերէն մին բնակող Հայ մը ուրիշ կրօնքէ մէկու մը հետ թուղթ խաղալով պայման կը դնէ որ եթէ խաղը ինքը կորսնցնէ իր 18 տարեկան աղջիկը անոր կնու. թեան տայ. և խաղը կը կորսնցնէ ու կատարէ իր զաւակը որ իրեն հետեւի և կսպառնայ: Աղջիկը գիշերանց հօրենական տունէն կը փախի գիւղէ գիւղ թափառելով կ'ապաստանի Բաղէշի առաջնորդարանը: Առաջնորդ վարդապետը այս խեղճ աղջիկը վար դնելով, առաջ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶՈՒՆԵՐ

[7]

Շրջակայ գիւղերէն գատ. քաղաքէն ալ քերականութեան ու հետաքրքիրներու անգին բազմութիւն մը կը հաւաքուէր: Ու գիւղի ամբողջ ժողովրդեան խանգոտ մասնակցութիւնով եօթն կարաս խրխայ կը դնեն. գիւղերը ողջուն, ամբողջն ալ ոտքի վրայ են: Տէր Վահան եկեղեցու խուցէն քառասուն օր դուրս ելած չէ: «Սաղմոս»ի ու Նաբեկի հետ իր առջեւ գրուած են նաեւ Ազգային պատմութիւն ու Բաֆթիի նոր սպուած «Խեղդ»ը: Քառասուն օր գիւղի երիտասարդներէն օրական կարգով, քանի մ'անձինք կերթան գիւղերնը աւեր հետ անցունելու. ու իրենց սիրելի նորընծայի քառասունքը պահպանելու համար: Այդ վերջին գիւղերը, ամենուն համար նուիրական ու նշանաւոր գիւղեր մ'է: Մերեր, տարիքները երիտասարդներ ու պատանիներ, ամենքն ալ միեւնոյն խանդով լեցուած, ամեն ոք իր կողմէն ժրջանութիւն ցոյց կուտայ այդ գործին ու աշխատութեան մասնակցելու: Հոս, հասարակական այսպիսի գործի մը մէջ «Իմ ու քու կը» չկայ: Ահա այսպիսի պարագաներու մէջն է որ, հայ գիւղացիի սրտի ազնուութեան ու եղբայրական անկեղծութիւնը կը փայլի. իր ամենէն աղւոր երեւոյթով:

Դեռ կէս գիւղերուան աքաղաղ իր առաջին «կուկուլիկու»ն չը կոչած, ժամար Յարոն՝ տանիքէ տանիք թափառելով, իր կոկորդալից օրորողոտ ձայնով «ժամ հրամայէք, ողորմի Աստուած ձեր

ծնողաց» կը պոռայ ու իր ձեռքի ձողանով, նշանաւոր աներու դռները կը բաղխէ:

Ու «խրխայի» եօթն կարասները, գիւղի չըքնաղ գերեզմանոցի ծայր եղող մարմանդի քով փորած մեծ փոսի մը մէջ վառուող ահագին «օճախ»ի մէջ անքոյթ եւ կուգային:

Գիւղական այդ նուիրական «օճախը» որ այսպիսի նշանաւոր օրերուն ու «ցատաժամ»երու համար բացուելով, ամբողջ գիւղի անկեղծ մասնակցութիւնով կը բարձրանա ու կը միայն, իր նուիրական երեւոյթը իմաստի մշտապէս կրակը կը միշտնէ, ուր կ'իկողպները Արամաղայ համար շահութիւն կը գարնէին. բայց գիւղական այն համբաւը հոգու գործակցութեան մեծ «օճախին» մէջ առասպելական շանթերը չէին տեսնուէր. հոս եւս ցող եօթն խորհրդաւոր կարասներու մէջը՝ սիրոյ ու մեղութեան անարատ ողջակէզն էր որ կը ձեւանէր: Գիւղական Սուրբ կեանքի ու անձնագրհոթեան վսեմ ցոլքերն էին:

Ու եօթն կտրիճները՝ մէկ մէկ ահագին թնթոց ձեռքերնին, եօթն աճնուէր գինուորի նման, այդ ետացող կարասներու գլուխ կայնած, իրենց հողանի բազկաց ու կորովի թիկունքի ամենայն ուժով գինուորական կարգապահութիւնով, ուրիշ համաթիւ խումբ մը երիտասարդաց հետ, անձանձիւ կը թնթեն ու կը զարնեն այն եօթն կարաս խրխայները: Ետանդն ու խիղճը, որ կը զեղու այն հայ «կտրիճ ձախիլ»ներու անարատ սիրտն ու հոգին, աննարագիւրի է:

Ս. Աստուծո իկեղեցւոյ դարաւոր կամարները կը թնթայ այն խորհրդաւոր անուշ երգեցողութիւնով, զոր այդ գիւղի խումբ մը քաղցրաձայն մանուկներ

ըր՝ դասապետներու առաջնորդութեամբ կը գեղեցիկնէ: Իր կրած աղէտներով ու զաւանթութիւնով կորովցած ու բարձրացած այդ գիւղի ամբողջ ժողովուրդը, եղբայրակցական կապերով կապուած իր հոգեկան ուժի մղումով ի հաւանալից կը մասնակցի այդ օրուան հրապարակային մաղթանքներուն ու իր սիրտն ու հոգին, որ իր հայրենիքի կապուտ երկնքի չափ պարզ, ու Տիգրիսի վէժտ ալիքներու նման յոտակ է, կը բանայ. ու իր արհաւիրքներու սարսուռը՝ հրգեկան այդ անդիմադրելի ու ժին առջեւ, տեղի տալով, իր ներթափանց ու բարոյական փայլն ու անգործ օրերու յիշատակը կը զօրացնէ գինը: Մէկ սիրտ ու մէկ հոգի, իր հայրենիքի վերականգնումին համար աշխատելու ուստըն է որ կը նուիրագործուի այդ խորհրդաւոր ձեւանցող եօթն կարասի ու գիւղի արժանաւոր զաւակ Տէր Վահանի անդրանիկ պատարագով:

Իրենց սիրական Ս. Աստուծո կամարներու ներքեւ խոնոռող խոռոներում ժողովուրդը, իր սիրտն ու հոգին բացած, «փառք քեզ Աստուած որ մեզ էս օր էլ տեսնել տուիր». սրտագին շնորհակալութիւնով, իր նախահարց գոհութիւն կը յայտնէր: անցեալի բոլոր յիշատակներէն յուզուելով ու լաւով իրենց սրտերը անդադար կը բախէին:

Յուշուած ժողովուրդը, իր սիրելի նորընծային հետ կը դիմէ «խրխայներ»ու դրոշմով վայրը: Կը կատարուի խրխայ օրհնէնքի արարողութիւնը ու բոլոր ժողովուրդը, զաւար խոտերու վրայ դաս նստած, ժիւ մատակարարներու ձեռքով կը բաշխուի ամենուն հայկական այդ կերակուրէն ինառատ: Ամենքն ալ կուտեն կը յագեան կուշու կուշու:

նորդարանի մէջ, կը հեռագրէր Պատրիարքարան:

— Լուսիններէն — վիճակաւ տարանքին մէջ պատրաստուած 160 էջէ բաղկացեալ այս գիրքը գրեց Ս. Դարթ-Պէկ. գինն է 2 ֆրանք և կը ծախուի հետեւեալ պայմաններով:

400 օրինակ Արապիկէրի որբանոցին համար:

300 օրինակ Կիպրոսի Որբանոցին համար:

Իսկ կը մնայ 300 օրինակ հեղինակին իր բարեկամներուն նուիրելու և ծախքը հոնելու համար:

— Սօփիայի մեր թղթակիցը հետեւեալ տեղեկութիւնները կը հաղորդէ մեզ:

«Վերջին կիւրակէն մեր երկսեռ նախակրթարանին քննութիւնն ու վիճակաբաշխութիւնը տեղի ունեցաւ ի ներկայութեան երկսեռ ժողովրդեան մը: Թաղականներէն ներկայ էին միայն երեք հոգի: Գէշ չանցաւ: Բոլոր պակասութիւններով հանդերձ գովելի էին Օր. Ա. Պէզազեանի և իր ուսանող-ուսանողուհեաց աշխատութիւնը: Կարծես ինչան գոհունակութեան է, որ մեր նորագ թղթականութիւնը օր. վարժուհիին մօտիկ 5 ամսականը ցարդ չվճարեց և շուտով վճարելու ալ միտք չունի: Եւ եթէ չեմ սխալիր կառավարութեան դիմած է Օր. Իրաւ է, որ չը վաղըս սակաւն կը վաղէ՛ ան. վճար թողու մի վարժուհի, երբ մանաւանդ ուրիշ տեղ պաշտօնի կոչուած է: Գէշ չպիտի լինի եւ թէ չըմհայեցութեամբ գործուի և միշտ երկու կողմէն խորհուրդի: Մեր նորագ թաղականի ցարդ ունեցած կենաց նայելով լաւագոյն գործեր չգիտեմ պիտի կրնա՞նք սպասել:

Կերեւի մեր պատ. անգամը աւելի գրելով և հրամայելով կը կարծեն գործած լինի: Այսու հանդերձ սպասենք քիչ մը ևս:

«Այս տեղ ալ ունէինք մէկ ու կէս տարիէ ի վեր Դպրոց դաս մը, որ շիտակն բնելով մանաւանդ տաղաւար կամ հանդիսաւոր օրեր գիտէր փայլ և շուք տալ եկեղեցական երգեցողութեանց, ի վարժացումն օտարին: Իսկ այս պարտնէր ոչ միայն կերպին, այլ և իրենք իրենց մէջ բաժնեգին մը վճարելով, հեղեցելով մէջ պնակ պտտցնելով և ուրիշ նուէրներ ալ բնդունելով, պատկի, մկրտութեան և թաղման առթիւ բաւական պէտքեր հոգացած են, որոնք անհրաժեշտ եղած են եկեղեցւոյն համար: սոյն դաս հրաժարած է այսօր և եկեղեցին ալ օրէ օր իր հին վիճակին մէջ ինչալու վրայ է: «Ինչո՞ւ համար արգիօք մեր մէջ լաւ ու աղէկը շատ տեղ չունի»:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Հազար ու մէկ գիշերի երեւոյթ մը. — Գարսից Շահը անցեալ օր ցուցահանդէսի Ապակեղէն պալատին մէջ հիանալի տեսարանի մը հանդիսատես եղաւ:

Տեսարանն էր. — «Խիստ գեղեցիկ և ակնախաղ ու փայլուն գոյներով թիթեռնիկներ, որոնք շրջափակի մը մէջ կը թռչտէին ամէն վարկեան իրենց գոյները փոխելով:

«Յետոյ կ'երևնային կիներ, որոնք թեթեւ և թափանցիկ շղարչներու մէջ պլոււած մինչև ձեղունները կը բարձրանային մեքենայի մը շնորհիւ: Եւ անդին դարաւորապէս մը վրայ նուազներու ձայնով պարուհիներու խումբ մը շնորհալի խաղեր կը ձեւացնէր: և անոնց վրայ պա-

լատին կամարէն գոյնգոյն կայծերու տարաքի մը կը տեղար:

Շահն ու իրեն հետ ներկայ եղողները կարծեցին թէ երազի մը մէջ կապրին:

— Ծովակալ Սէյմուր գունդով մը Դիէնձինէն Բէքինի օգնութեան կերթար: Երբ ջինական խումբ մը զիրենք դիմաւորեց, որոնց հետ բաւական տաք ընդհարում մը ունենալով հասկցաւ որ ճամբան շարունակել անկարելի պիտի ըլլայ: որոշեց ետ դառնալ: Սակայն իրենցմէ վերաւոր ինկածներ կային, որոնք փոխադրել անկարելի էր, իսկ ողջ հոն ձգել ալ չէր ըլլար: Ուստի Սէյմուր լալով վերադարձնելուն մօտեցաւ և ըսաւ. «սիրելիներ ձեզի փոխադրել կարելի չպիտի ըլլայ: ուրեմն ո՛րը կընտրէք, ձեր ընկերներուն գընդակովը մեռնի, թէ ողջ ջինացիներուն ձեռքը անցնի, որոնք ձեզ անարգական միջոցներով պիտի յօշոտեն:

Վերադարձնելու իրենց ընկերներուն գընդակովը մեռնի ուղեցին: հրամանը տրուեցաւ, հրացանները պարպուեցան և վերադարձնելու ունին:

Կառապալաններու գործադրող. — Բարիզի մէջ 18 հազար կառք կը գտնուի ժողովրդեան երթեւեկութիւնը դիւրացնելու համար: Այդ կառքերը ալ և ալ ընկերութիւններու կը պատկանին, որոնք իրենց կառքերը օրական 15 էն 20 ֆրանք վճարքի փոխարէն վարձու կուտան կառապաններու: Արդ՝ ընկերութեանց և կառապաններու մէջ անհամաձայնութիւն մը ծագած ըլլալով, 4000 կառապաններ գործադու ըրին և 18 հազար կառքէն միայն 8 հազար մնաց Բարիզի մէջ, այս բանը երթեւեկու-

թեան համար ահագին դժուարութիւններու և նեղութիւններու պատճառ եղաւ, մանաւանդ հիմա որ Արուեստահանդէսի առթիւ ալ բազմութիւնը արտաքոյ կարգի է:

Այս գործադուլին լուծում տալու և կառապաններն ու ընկերութիւնները համաձայնեցնելու համար ժողով մը տեղի պիտի ունենայ, եթէ այդ համաձայնութիւնը առաջ չգայ, այն ատեն Բարիզի ամբողջ կառապանները գործադու պիտի ընեն:

Բժշկական համաժողով. — Օգոստոս երկուքին Յուցահանդէսի հանդիսատեսին մէջ բժշկական միջազգային համաժողովի ԺՁրդնիստը տեղի ունեցած է:

Ժողովին 6000 բժիշկներ մասնակցած են, որոնց 2000 էն աւելին Ֆրանսացի, 600ը Ռուս, իսկ մնացածներն ալ ալ եւ ալ ազգութիւններէ են:

Այս մեծ համազգային ժողովին մասնակցած են նաեւ բաւական թըւով հայ բժիշկներ ալ որոնք եկած են Ռուսաստանէ և Թուրքիայէ:

Վիճակագրութեան մը համեմատ այսօր Բարիզի Համալսարանէն վերջապա 24 հայ բժիշկներ և 5 առաջնակարգ գեղագործներ կան, որք Բարիզի և Ֆրանսայի ալ և ալ քաղաքներուն մէջ հաստատուած են:

Խաղաղ իշխանի քաղաքին. — Գարատազի իշխանին աղջիկն է, նախնական կրթութիւնն ստացած է Չէթինիէի իր հօրը գեղեկին մէջ, Չուիցերիացի վարժուհիի մը ձեռքով, որ իրեն Ֆրանսերէնի և Սերպերէնի դասեր կուտար: Յետոյ գացած է Բէթերսպուրկի Ս. մօնա վարժարանը, ուր սովորած է իտալերէն և Գերմաներէն լեզուներն ալ:

Ե

Հաղիւ թէ Տէր Վահան իր նոր պաշտօնին ձեռնարկած, իր առաջին հոգ կը լինի գիւղի դպրոցը վերաբնակելու: Թէ գիւղացիներն եւ թէ բոլոր ժողովրդեան գաղափարները առանձին առարձին կը շոյալի, ու ամենու մէջը միեւնոյն զգացումը կը ներշնչէ դպրոցի օգտակարութեան համար:

Բայց որովհետեւ գիւղի նախկին դպրոցի չէնքը անարմար էր, այս մասին ալ մտածել ու գործել պէտք էր, ասոր համար կը յորդորէ ժողովուրդը, եկեղեցւոյ առջնութիւնը երկյարկ կոկիկ դպրոց մը շինել: Ժողովուրդը իր անձնուէր տէրտէրին հաճութեամբ կը լսէ, ու շուտով կը ձեռնարկուի դպրոցի շինութեան:

Փ... գիւղի արեւմտակողմն, դեղին վարդերու մայրաններով ու անթիւ ծառերու պուրակներով պնտուած հիւսնալի բարձրավանդակի մը վրայ՝ գողտրիկ շինուածքով մը կը բարձրանար «Ս. Ատովմեանց» անուան նուիրուած տաճարը, որոյ հիմնարկութեան թուականը շատ դարեր տեսած էին թէն, բայց հետզհետէ Արարացւոց ու Թրքաց արշաւանքներու պատճառով յառաջ եկած սոսկալի արհաւիրքներ ու հարստահարութիւններ 5-6 դար յետոյ քայքայման վիճակի եւթարկած էին դայն: 4-5 դար յառաջ Պիթիսին տիրապետող Քիւրդ բէկի մը բռնակալութեան օրով, գիւղի իշխաններէն ոմանց, Տէր Նահապետ Նահապետեանի եւ Խնդիրկատարու վանոց բարեհամբաւ վանահայր վարդապետի մը ջանքերով կը վերանորոգուի նա, իր

ձախտի վրայ գտնուող մարմարինն կենդանի վերկայ մէջ այդ մասին:

Իր քառանկիւնի փառաւոր շինուածքով ու զրդեկաձեւ կուռ կեցուածքով, անմատչելի բերդի մը երեւոյթը ունի այդ տաճարը, որ իր պատկառելի դերով կարծես թէ անբուն կը հսկէ այդ գիւղի վրայ, որ իր դարաւոր կեանքի ալեկոծուած անցեալէն կենդանի օրինակներով՝ շատ մեծ ու անմոռանալի յիշատակներ կը պատկերացնէ: Ամեն անգամ երբ տարադէպ վիշտ մը, կամ անակնկալ արհաւիրք մը դար սոյն ժողովրդեան խաղաղ կեանքը վրդովելու, իրենց հոգեկան անսպառ մխիթարութիւնը «Ս. Ատովմեան» պաշտպանութեան ներքեւ կը գտնէին: Եւ ի՞նչ աւելի անուշ ու նուիրական հայ գիւղացիի համար, քան իր հաւատքն ու Հայրենիքը, որոյ երկուքն ալ, իրարու լրացուցիչ են:

Այս անգամ դարձեալ այդ մեծ մխիթարութեան անուշ հմայքներով, Տէր Վահան կառավարիչ դպրոցը եկեղեցիի աշակերով, անոր հովանիին տակ շինելու ու կը յաջողի:

Դպրոցի հիմնարկութեան առաջին քուրն ինք, Տէր Վահան կը դնէ. ու ամբողջ գիւղը, մէկ սիրտ մէկ հոգի կը հետեւի իր հովուի օրհնակին, ամիս չը լրացած կոկիկ ու գեղեցիկ դպրոցի մերկյարկանի չէնքը արդէն կը բարձրանայ իրենց սիրական Ս. Ատովմեան տաճարի քովը:

Ը

Տէր Վահան իրեն գիտակից իր գործին ու գաղափարով շինուած իր ժողովրդեան բարօրութեան համար աշխատելու, իրեն ձգարկտ քահանայ,

դպրոցի նիւթական չէնքը, Ս. Ատովմեան շուքին տակ կանգնեցնելով չը բաւականացաւ: Նա որ, դպրոցի երես տեսած ու ազգային մատենագիրները բաւական պարպած էր, նա՛ որոյ սիրտն ու հոգին՝ իր գիւղացիներու լաւութեան ու իր բարի դրկիցներու «օճախ»ներու շինութեան համար՝ յաւքան ուժգին բաւախած ու շատ գիշերներ մաքի ու սրտի այդ տարապայման յաղման ներքեւ, իր սրտակից մէկ քովի երիտասարդաց հետ, հրացան ձեռքներին ու գէնքեր վրանին, գիւղի պահապանութեան համար, կամ եկեղեցւոյ թեւի անմատչելի ժայռերու, կամ «Յանենց թաղ»ի կանանչաւետ ծառերու ու անուշահոտ պարտէզներու մէջ, մեղքահամ աղբիւրէ մը հոսող զուլալ առուակի մը շուրջ, մտահոգ լուսցուցած էին, այդ վառ երեւակայութիւնով ու առողջ մտքի անխաղախ սնունդով, իր հայրենիքի Ս. հողին վրայ մեծցող ու իր պաշտած հայրենի գիւղին վրայ քահանայ ձեռնադրուող մէկը, միթէ կարելի էր որ, կրօնական սեւ օրեմի ներքեւ, իր բոլոր ազնիւ զգացողութիւնները սեւցնէր, միշտակ խուսկի ու մոմի «Փառատայի ու պահպանիչ»ի մէջ կեդրոնացնէր իր միտքը:

Ա.Ա.Ա.Ա.Ա.Ա. Պ. ՆԱԶԱՊԵՏԵԱՆ

(Շարունակելի)



ՀԱՎԱՏԻՍԱԹԸ
ԲՕԼԻԹԵՔԻՅԷ

ԹԻԻՐԱՆ

Պիլիս էճնէպի գոնսօլոսարը
Թարափընտան Սթանպօլ սեֆա-
րէթէրինէ վիրուտ իտէն րաբօր-
լարա նազարէն, Պիլիս գօմանտա
նը Ալի փաշանըն էմրի իւզէրինէ
թիւրք նիզամի ասկէրէրի քիւրտ
լէր իլէ պէրապէր, էրմէնի գօմի-
թէլէրի արամագ պէհանէսի իլէ
Սասուն գաղասընտա վէ Տալու-
րիկ քէօյիւն հազընլարընտա պու-
լընտան Սէպափանք նամ էրմէնի քէօ
յիւնէ հիւճիւմէ, քէօյիւ հազմըն-
լար վէ էհալիսինի էրքէք, գաղտըն
վէ չօճաք 200 քիշի պիլա իսթիս
նա գաթիլ ու թէլէֆ իթմիշէր :

Քիլիսէյէ իթմիշ իթմիշ 18
քիշի իլէ 80 հաշընտա օլան փա-
փաղըտա քիլիսէնին իշէրիսինտէ
պուլընլարընտա հալտէ, քիլիսէ
իլէ պէրապէր հազմընլար : Քէօյ
աղասընըն զէվճէսի համիլէ օլտու-
ղը հալտէ էնվալի հաքարէթ վէ
իսկէնէլէր իլէ փարչալամընլար :
Գօմանտան Ալի փաշա ճիվար
էրմէնի քէօյլէրինտէ վուրու-
մասը գարարալաշտըրուպ էմր իթ-
միշ տիր :

— Սուլթանըն թախթա չըգտը-
ղընըն 25 ինճի սէնէյի տէվրիյէսի
միւնասիպէթի իլէ Սինկաբուրտտ
(Հինտ ու Չին էյալէթինտէ 97,
պին էհալիսի օլան պիր լիման) 10
պին լիւրա սարֆը իլէ համիտիյէ
ճամիսի իսմինտէ պէօյիւք պիր
ճամի հափըլաճագ :

— Սթանպօլտան ալընտն ճէրի-
տէլէր սապըգ Սատրաղամ միւշիւր
Ճէվաւտ փաշանըն վէֆաթընը պիլ
տիրմէքտէ տիրէր :

Միլթէվէֆա Ճէվաւտ փաշա
Սատրաղամըղընտա էրմէնիլէրէ
գարըն շիտտէթ վէ դաղէպ իճրա
օլընմայուպ, անլէրի թէսքին իթ-
մէք իշիւն իսլահաթ իճրասը թա-
րաֆտարը պուլընմըն վէ զայրէթ
իթմիշ իսէտէ, Սուլթան իլէ Եր-
տըղ էրքիսնը վէ վիւքէլատան պա
ղըսը Ճէվաւտ փաշայա գարըն չըգ
մըլլար տըր : Նիհայէթի Ճէվաւտ
փաշանըն իսլահաթ թարաֆտարը
պուլընմուսընտան, քէնտիսի էրմէ-
նիլէրէ վէ Չէօն թիւրքլէրէ տօսթ
տըր տէյու ալ իտիլէրէք սիւր-
կին մագամընտա կիրիտէ, սօն-
րատա Շամա կէօնտէրիլմիշ տիր :

ԻԹԱԼԻԱ

Միլթէվէֆա գրալ Ումպէր-
թօնըն ճէնագէ ալալը զայէթ պէգ
յիւք զիյնէթ վէ թանթանա իլէ
Բօմատա իճրա օլընուպ Պանթէօն
տա տէֆն օլընմըն տըր :

Ճէնագէ ալալընըն էօնիւնտէն
գրալը ճէտիտ վ. էմմանուէլ կիթ
մէքտէ օլուպ խանէտանը գրալի
աղալարը անըն արգասընտան հիւ-
րիւմէքտէ իմիշէր :

Պուլարտան սօնրա տիւվէլը
սայրիւն հէյլէթիլէրի կէլմէքտէ ի-

տիլէր : Բռէնս Ֆէրտինանտ հաղ-
լէթիլէրի պիլզաթ հազըր իտի :

Միլթէվէֆա Կրալըն թապու-
թը քէնտի արգասըն մուճիպինճէ
պիր թօփ արապասը իւրինէ գօ-
նուլմուշ :

Իթալիա մէճիլի մէպուսանը
խանէտանը գրալիյէ մուհապէ-
թինի ալէնէն պէյան իթտիկտէն
սօնրա գրալ Ումպէրթօնըն հէյ-
լէլինի րէք իթմէկի գարարալա-
տըրմըն տըր :

ՉԻՆ

Կէչէն նիւսթէմիլտէ Էվրօքա
կազէթալարընտան ալարագ Չինլի
լէրին 12,000 Բուս ասկէրի թէլէֆ
իթտիկլէրինի հազմըն իտիք իսէ
տէ : Ալիլիւն ալընտն մայիլմաթա
նազարէն Բուսլարըն թէլէֆիյա-
թը 12,000 օլմայուպ 1200 իմիշ :

Չէնէրու կրօտքով խապարու-
վըստան իշէթիւրպուրկա վէրտի-
կի թէլէկրաֆա նազարէն, Յուլիս
27 տէ ժէնէրալ Չախարով, Սան-
սինկ նամ Չին գալէսինին գօման-
տանըն թէսլիմ օլմայա տալէթ
իթմիշ իսէ տէ, քիմսէ կէօրիւնմէ-
տիկինտէն թօփա թուլտարաք 3
մոտթ ուրտուգտան սօնրա գալէսին
պիր գըսմընը գալթ իթմիշ : Գա-
ղաղար հիւպէրէք Սունկտի չա-
լընը կէչուպ չէհրին իւզէրինէ
շիտտէթլէ հիւճիւմ իթմիշէր :
Չինլիլէր հէր նէ գատար գարըն
քօյմուշլար իսէ տէ նիհայէթ
քիւլիլիլէթի թէլէֆիյաթ վէրէրէք
կէրի չէքիլմէկէ մէպուր օլմուշ-
լար :

Ռուսլար չէհրտէ քիւլիլիլէթի
ճէպհանէ վէ սիւհա էլէ կէչիլմիշ-
լէր :

— Բէքին իւզէրինէ իլէրլէյէճէք
էճնէպի ասկէրլէրինէ մուգալմէթ
իթմէք իշիւն 50,000 Չինլի ասկէ-
րի հազըրլանմըն օլուպ, պուլար
իւշ նօթթա իւզէրինտէ պուլընմագ
տա տըրլար : Պիրինճիսի ժէնէրալ
Մանըն մայէթիլտէ 10,000 ասկէր
քի Դիէն Չին հազընլարընտա
պուլընմագտա, իքինճիսի 20,000
քիշի իլէ ժէնէրալ Սունկ, Բէքի-
նին հարը հօլու իւզէրինտէ պէք-
լէմէքտէ, իւշիւնճի 20,000 քիշի-
տէ Բէքին գարուլարընը սագլա-
մագտա օլուպ պուլարտան մատտա
էթլէ պէրու հալըմըն Չին ասկէր
լէրիտէ պաշա :

Յուլիս 30 տա Ճաքոն ասկէրլէրի
թէտքիգաթ իշիւն պիր Չինլի քէօ
յիւն տօղրու իլէրլէտիլէրինտէ :
Չինլիլէր գուլիպէլէր իշիւնտէ իլ-
թիճա իլէ տէլիլէրտէն Ճաքոնիա
լըլարըն իւզէրինէ աթէշէ պաշա-
լուպ անլէրի կէրի սիւրմէկէ մուսֆ
ֆագ օլմուշլար :

— Պիրլէքտէն վէրիլմիշ պիր թէ
լէկրաֆտա շիտտէթ էլիլիլէրին հա-
լաթտա պուլընուպ իմէրաթօրա
մախսուս մահալտէ սագլանմըն օլ
տուղլարընը պիլտիրմէքտէ տիր :

Չէնէրալ կրօտքով օգօստոս 1
թարիլի իլէ վէրտիկի պիր թէլէկ
րաֆտա Չինլիլէր իքինճի տէֆա
օլարագ Պալիպէլէնսք չէհրին իւ-

զէրինէ հիւճիւմ իթմիշ օլտուգլա-
լընը պիլտիրմէքտէ տիր :

Դիէնճին հիվարարընտա էճնէ-
պի օրտուսը իլէ Չինլիլէր պէյնին-
տէ վուգու պուլան միւտարէպէլէր
տէ ասաքիլի էճնէպիլէտէն քիւլ-
լիլէթլէ էթմիշլէր :

Էվլէլէրի նիւսթէմիլտէ Բռէնս
Լի Բինկ Հինկին Չին օրտուսը ու
մուլ գօմանտանըղընա նասպ օ-
լընտըղընը հազմըն իտիք :

Պու չախա Շանգուրկ էյալէ-
թինին վալիսի իքէն իշէտիկի մու-
թէտտիտ ճինայէթլէրի իշիւն Ալ-
ման տէօվէթինին թալէպի իւզէ-
րինէ ալ օլմուշ օլուպ, Շանկայ
ֆրանսըղ գօնսօլօրտա մէքըլար Լի
Բինկ Հինկին իքի ֆրանսըղ րաբա-
ղը իլէ 3000 հէրլի խրիսթիյանա
լը գաթիլ ու թէլէֆ իթտիրմիշ օլ-
տուղընը պիլտիրմիշ տիր :

Սապըգ Ալմանիա հարպիլէ նա-
ղըրը Գօնթ վալտէրլէ, Չինտէ-
քի էճնէպի օրտուսը ումու գօման
տանըղընա թալիյի օլընմըն տըր :

ՍԵՐՊԻԱ

Գրալ Ալէքսանդր զէվճէսի հէնի
գրալիչա Տրակալը րէսմէն օրտուս
թալթիմ իտուպ վալիտէսինի նա-
թալինին նամը իլէ զիք օլուսնա
ալալի իսմի տէյիշալիլէրէք Տրակա
ալալը թէսմիլէ իթմիշ, վէ քէզա
վալիտէսինին իսմինի թալընտան
պիօյիւք պիր մէքթէպին տէ հէնի
գրալիչանըն նամը իլէ թէսմիլէ օլ
մասընը էմր իթմիշ տիր :

Սըրպ օրտուսը ումու գօման-
տանըղընտան իսթիֆա իթմիշ օ-
լան րէտէրի Միլանըն հէրինտէ
սայիլ պիրիսինի թալիյի իտուպ գը
րալիչա Տրականըն պիրատէրինէ
թա.գօօնընընըն պիօյիւք րիւթ
պէսինի վէրմիշ տիր :

Կրալըն րէտէր վէ վալիտէ-
սինէ գարըն պու հարէքթինի էճ
նէպի կազէթալարը շիտտէթլէ մու-
ալտէզէ իթմէքտէ վէ նանքէօրըգ
թէսմիլէ էլլէմէքտէ տիրէր :

ՐՈՒՍԻԱ

Րուսիա խարիճիյէ նազըրլէղընա,
միլթէվէֆա գօնթ Մուրալիլէվին
հէրինէ ուզուր միւտտէթտէն պէ
րու միւլթէլարըգ մագամընտա
պուլընտան Գօնթ Լամտօրիթ թա-
լին օլմուշ տըր :

Պու զալթ ինկիլիթէրայա տօսթ
օլուպ թիւրք հիւքիւմէթինէ տէ
գարըն տըր :

ԹՐԱՆՍԿԱՆԱ

Ճէնուպի Աֆրիգատան վէրիլէն
սօն թէլէկրաֆտա նազարէն Պօ-
էր ժէնէրալը Տէ վէտ իւզէրինէ
հիւրիլէն Լօրա Բիլինէր վալ չալընը
կէչմիշ տիր : Պուլտան մատտա
4000 Պօէր Օրանճ էյալէթինէ ին
կիլիլլէր էլինէ էսիր տիւշտիլէր :

Րէսմի տարիլէրտէ տէվէրան ի
տէն պաղը չալիսթա նազարէն Մ-
Գրիւկէր սիւրկիւն օլմամագ չար
թը իլէ թէսլիմ օլաճագ իմիշ :
Թէքլար պիր մալիւմաթա նա-

զարէն Տէ վիտ վէֆաթ իթմիշ
Ուաշինկիլթօնտան վէրիլմիշ պիր
թէլէկրաֆա նազարէն Չինտէն Մ-
Ալմէրիկանըն հարպիլէ նէգարէթի-
նէ կէլէն պիր թէլէկրաֆտա Չին-
տէ պուլընտան ասաքիլի էճնէպիլէ
գօմանտանըղըն պէյնիտէ իլ-
թիլաֆ վուգուլը նագլ իթմէքտէ
տիր :

— Շանկհայտան վէրիլէն թէ-
լէկրաֆտա նազարէն, էճնէպիլէթ
տօսթ պուլընտան Հըու Չինկ Չէնկ
նամ Չինլի րիճալըն Բէքինտէ պէ
նէն պալընը քէսմիշլէր :

Էվլէլէրի նուսթէմիլտէ զալիլէրի
ացալընտա պուլղտայ ֆիյաթը
7.60-11.60 օլաճագ հէրտէ, սէհ-
վէն 7.60-21.60 հազըրմըն րաբ :

ՁՈՒԼԱՐԱՆ

ՏՊԱՐԱՆԱՆ ՏԱՌԵՐՈՒ

ՅԱԿՈԲ ԾԵՐՈՒՆԵԱՆԻ

Կը ձուլէ ամեն լիզուէ տպագ-
րական տուոնր մասնաւորապէս Հա-
յերնեւ եւ Թուրքիոյն, էսպաս, ան-
թէրլինեւ, գիծ եւ կառնիթիւր :
Գինիւր յոյժ գիւրամատչելի :
Հասցէ՝

Agop Dzéroutian

(Bulgarie)

Sofia

ՓՈԲՈՒՐԱՅԱՆԻ "ՁՈՐԱ"

ԵՐՈՒԱՆԴ ԹԵՐԶԵԱՆ

Իշպու ֆօթօկրաֆհանէ Սաքա-
լը Չէլմէտէն Իսկի Գաղարմա մէյ-
տանընտա Ուլիցա Սապօնա 218
նիւմէրօլու մահալէ նագլ օլընմըն
տըր :

Միւրաճաթ իտէճէք զէվթը
մէնուրն պրագագ իշիւն էհպէն
ֆիյաթլա զայէթ թէմիլ ֆօթօկ-
րաֆտար հէնի ուսուլար իլէ չը-
գարըմագտա տըր :

« Չայն Հայրնեւադ »

Լրագիր Ազգային գրական եւ ֆա-
ղաքական կը հրատարակուի շաբաթ
սնդամ մը. կը պարուսնակ լուրջ յոյ-
նասոնեւ, անտաթիւնեւ եւ Ամերի-
կայի հայ գաղթականութեան լուսին
չահեկան լուրեր եւ տեղեկութիւն-
ներ :

Բաժնեգրին է տարեկան 10 ֆր :

Հասցէ

American Hai Publishing & Co
P. O. Box 379 Worcester Mass.
(U. S. A.)

ՏՊԱՐԱՆ "ԻՐԱՆԻՆԻ"

Գրքեր, տետրակներ, հրաւիրագրի,
տոմսակներ հալըն կը տպագրուին ա-
մենադիւրամատչելի գնեով ու գոնա-
ցուցիչ պայմաններով : Ֆրանսերէն,
յունարէն եւ պուլկարէն փաթեթ
գործեր եւս կը պատրաստուին :
Օտար երկիրներէ եւ ուրիշ քաղաք-
ներէ եկած յանձնարարութիւնք փու-
թով եւ ճշգիւ կը գործադրուին :